

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի Լեոյի անվան հ. 65 ավագ
դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տնտեսական կարողունակության ձևավորումը մաթեմատիկայի
դասավանդման գործընթացում՝ ֆինանսական համատեքստով
խնդիրների ուսումնասիրման միջոցով

Կատարող՝ Լալա Մարտիրոսյան

Ղեկավար՝ Գայանե Սիմոնյան

ԵՐԵՎԱՆ 2022

Բովանդակություն

Ներածություն-----	3
Հիմնական բովանդակությունը -----	5
Եզրակացություն -----	13
Օգտագործված գրականություն և էլեկտրոնային ռեսուրսներ -----	15

Ներածություն

Կարևորելով ֆինանսական կրթությունը ՀՀ բնակչության շրջանում՝ որպես երկրի ֆինանսական կայունության, ֆինանսական ներգրավվածության և քաղաքացիների տնտեսական բարեկեցության կարևոր նախադրյալ, ՀՀ կենտրոնական բանկը 2007թ.-ից իրականացրել է ֆինանսական կրթության բազմաթիվ միջոցառումներ:

Վիճակն այսօր այնպիսին է, որ մաթեմատիկայի և հանրահաշվի դասագրքերում ընդգրկված տեքստային խնդիրներում միայն եզակի նմուշներ կան, որոնց համատեքստը անուղղակի առնչություն ունի ֆինանսական այս կամ այն ոլորտին վերաբերող իրադրության հետ:

Թեմայի արդիականությունը սովորողներից պահանջում է անհրաժեշտ նվազագույն ֆինանսական **գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ**՝ ըստ կրթական մակարդակների: Ֆինանսական կրթությունը ներառում է 7 թեմատիկ ոլորտներ՝

1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում,
2. Անձնական բյուջեի կառավարում,
3. Խնայողություններ և երկարաժամկետ պլանավորում,
4. Պարտքերի կառավարում,
5. Ֆինանսական ծառայությունների արդյունավետ ընտրություն,
6. Անձնական իրավունքների պաշտպանություն,
7. Ֆինանսական խարդախությունների և զեղծարարությունների կանխարգելում և դրանցից պաշտպանություն:

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում ֆինանսական կրթության ինտեգրման հիմնական նպատակն է նպաստել ֆինանսապես գրագետ անձի ձևավորմանը, անձ ով ունի այնպիսի գիտելիքներ, հմտություններ մշակույթ, որոնք նրան հնարավորություն

են տալիս լինելու տեղեկացված իր անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնելու պատասխանատու վորոշումներ:

Ծրագրի նպատակը ՀՀ կրթական համակարգին և համընդհանուր մոտեցումներին համահունչ արդյունավետ ֆինանսական կրթության ծրագրի իրականացման միջոցով սովորողների անձնական ֆինանսների կառավարման կարողությունների զարգացումն է:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ֆինանսական կրթության ինտեգրումը պետք է ավելորդ ծանրաբեռնվածություն չառաջացնի սովորողների համար, դասավանդման տեսանկյունից լինի հետաքրքիր և դյուրըմբռնելի: Անհրաժեշտ է ֆինանսների վերաբերյալ տեղեկատվությունը մատուցել փոքր չափաբաժիններով, ներկայացնել պարզ և մատչելի: Այդ նպատակով առկա են տարբեր եղանակներ և մեթոդներ կրթական ծրագիրը արդյունավետ իրականացնելու համար:

Կարևոր խնդիրներից մեկը դասի ճիշտ պլանավորումն է: Դասապլան կազմելու նպատակն այն է, թե ինչպես օգնել աշակերտներին ուսումնական ակնկալվող արդյունքներին հասնելու համար:

<<Ի՞նչ եմ ուզում որ աշակերտները սովորեն>> հարցադրման միջոցով պետք է առանձնացնենք հմտությունները, ընկալումները, փաստերը և արժեքները, որոնք պետք է մատուցել դասի ընթացքում՝ հստակեցնելու չափելի նպատակներն ընդհանուր նպատակներից: Այս ամենն իհարկե պետք է իրագործել դասարանի առանձնահատկությունից ելնելով:

Դասի պլանավորման անհրաժեշտ քայլ է համարվում նաև գանահատումն, որը կարող է կատարվել ուսուցմանը զուգահեռ, դասի տարբեր փուլերում :

Հիմնական բովանդակությունը

Մաթեմատիկայի դասընթացում ինտեգրված ֆինանսական կրթության իրականացման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն ֆինանսական իրադրություն ներկայացնող տեքստային խնդիրները: Խնդրի տեքստը պարունակում է որոշակի տեղեկություն այս կամ այն հասկացության կամ երևույթի մասին (**գին, ավանդ, վարկ, բյուջե, եկամտաբերություն և այլն**):

1. Ընդհանուր տնտեսական հասկացությունների տիրապետում

Սովորողը կարողանա կատարել արդյունավետ գնումներ:

Խնդիր 1: (Գնումներ)

Տոնավաճառում Շուշանը, խորհրդակցելով մայրիկի հետ ընտրեց մարզագետ, որի գինը 10.500 դրամ էր: Նա խնդրեց մայրիկին, որ գնեն նաև 2 գույգ գուլպաներ, որոնց յուրաքանչյուր գույգի գինը 650 դրամ էր:

ա) Որքան գումար էր նրանց անհրաժեշտ գնումները կատարելու համար:

բ) Որքան կլինեք նրանց ստացած մանրը, եթե այդ գնումների համար վաճառողին տային 3 հատ 5000-ոց թղթադրամ:

Խնդիրը լուծելիս սովորողներին ուղղել հարց՝

- Շուշանը ինչու՞ խնդրեց գնել գուլպաներ (կարիք է թե ցանկություն):

Խնդիր 2: (Գնումներ և խնայողություն)

Արթուրը շուկայում վաճառում էր իրենց այգուց ստացված խնձորն ու տանձը: Օրվա ընթացքում խնձորի կիլոգրամը վաճառում էր 450 դրամով, տանձի կիլոգրամը՝ 650 դրամով: Երեկոյան նա որոշեց իջեցնել գները՝ խնձորինը 600 դրամով, տանձինը՝ 70 դրամով: Շուշանը կեսօրին գնաց էլ էր շուկա և Արթուրից գնել 3-ական կիլոգրամ խնձոր և տանձ:

ա) Որքան էր վճարել Շուշանը այդ գնումների համար:

բ) Որքան կիսնայեր նա, եթե գնումները կատարեր երեկոյան:

Գնահատման չափանիշ՝ **արդյունավետ գնումներ կատարելու կարողություն:**

2. Անձնական բյուջեի կառավարում, եկամուտներ և ծախսեր

Սովորողը կարողանա կազմել և հաշվել իր անձնական բյուջեն:

Խնդիր 3: (Բյուջե)

Շուշանն ստանում էր կրթաթոշակ՝ ամսական 6500 դրամ, դասերից հետո աշխատում էր ընթերցարանում և ստանում ամսական 68.500 դրամ աշխատավարձ: Մարտ ամսին նա եղբորից ստացավ դրամական նվեր՝ 25.000 դրամ:

ա) Շուշանի ամսական հաստատուն եկամուտը մարտ ամսվա ամբողջ եկամտի ո՞ր մասն է կազմում:

բ) Մարտ ամսում ո՞րքան կկազմի Շուշանի խնայողությունը, եթե նա յուրաքանչյուր ամսում խնայում է հաստատուն եկամտի 1/10 մասը և փոփոխում եկամտի 2/5-ը:

Ինքնուրույն աշխատանք

Կազմել 3-4 խնդիրներ (ըստ աշակերտների քանակի), գրել դրանց լուծումները սխալներով: Մեկական խնդիր բաժանել սովորողներին և հանձնարարել 5-7 րոպեում գտնել լուծման սխալները և ճիշտ տարբերակը գրելով ներկայացնեն ուսուցչին: Արդյունքները քննարկել ամենաբազ և ճիշտ աշխատանք կատարողներին խրախուսել, իսկ դժվարացողներին օգնել և ոգևորել:

Խնդիր 4: Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերն ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակում ներկայացված տվյալներից՝ գտնել թե որքան գումար են հատկացնում Արամի ընտանիքում սննդի, կուսմունքի ծախսերի, հագուստի, տնտեսական ծախսերի, տրանսպորտի վրա և որքան խնայողություն են կատարում:

Խնդրի հակադարձը՝ Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերը ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակից ներկայացված ծախսերն արտահայտել տոկոսներով և կազմել համապատասխան շրջանաձև դիագրամը:

Խնդիր 5. (վարկ) Աշակերտի ծնողները վերցրել են 10 մլն. դրամ վարկ՝ 16% տարեկան տոկոսադրույքով և 5 տարի ժամկետով: Յուրաքանչյուր տարվա ավարտին վարկի գումարին ավելանում է նաև նրա տոկոսը, իսկ վարկը մարվում է ժամկետի վերջում: Որքա՞ն գումար պետք է ընտանիքը վճարի բանկին:

Լուծում

Յուրաքանչյուր տարվա ավարտին պարտքը կավելանա 16%-ով, այսինքն՝ 1.16 անգամ: Հետևաբար՝ մի տարի հետո կդառնա $10000000 \cdot 1.16$, երկու տարի հետո՝ $10000000 \cdot 1.16$, հինգ տարի հետո՝ $10000000 \cdot 1.16^5 = 21003415$:

Պատ.՝ 21003415 դ.:

Ծանոթություն. Գործնականում վարկերի մարման տեսակով պայմանավորված (օրինակ՝ հավասար մարում, հավասար վարկ և այլն) կիրառվում են հատուկ բանաձևեր: Սովորողները իմանան վարկերի տեսակները՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ: Ֆիզիկական անձանց և փոքր ձեռնարկատերերի համար տարածված են վարկի հետևյալ տեսակները՝ սպառողական վարկեր, առևտրային (բիզնես) վարկեր, գյուղատնտեսական վարկեր, հիփոթեքային վարկեր:

Խնդիր 6. (ավանդ) Նարեն իր խնայած 4 միլիոն դրամը որպես երկարաժամկետ ավանդ ներդրել է բնակ՝ տարեկան 10 % տոկոսադրույքով: Հայտնի է, որ յուրաքանչյուր տարվա ավարտին ավանդի գումարին ավելանում է նաև նրա տոկոսը (կապիտալացվում է): Որքա՞ն կդառնա Նարեի գումարը 8 տարի հետո:

Լուծում

Յուրաքանչյուր տարվա ավարտին ավանդը կավելանա 10 % -ով, այսինքն՝ 1.1 անգամ: Հետևաբար, մի տարի հետո կդառնա $4000000 \cdot 1.1$, երկու տարի հետո՝

$$4000000 \cdot 1.1^2, \text{ իսկ ութ տարի հետո } 4000000 \cdot 1.1^8 \approx 8574355 :$$

Պատ.՝ 8574355 դ.:

Ծանոթություն: Սովորողը իմանա կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումների առանձնահատկությունները: Իմանա թե ինչպես է հաշվարկվում ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (ներառյալ սպասարկման վճարների դեպքը և վարկի փաստացի տոկոսադրույքը): Իմանա, որ խնայողությունների դեպքում եկամտաբերությունից բացի կարևոր են նաև ռիսկայնությունը:

Խնդիր 7. (հարկեր) Յուրաքանչյուր ամսվա աշխատավարձից եկամտային հարկը գանձվում է հետևյալ սանդղակով. մինչև 150000 դրամ անվանական աշխատավարձի 23%-ի չափով և ավելի բարձր աշխատավարձի դեպքում գումարվում է 150 000 դրամը գերազանցող մասի 28%-ի չափով:

- Առնվազն որքա՞ն պետք է լինի անվանական աշխատավարձը, որպեսզի հարկը գանձելուց հետո տնօրինելի աշխատավարձը քիչ չլինի 55 000 դրամից (նվազագույն աշխատավարձից)::

- Տարեկան որքա՞ն է կազմում աշխատավարձից գանձվող հարկը, եթե անվանական աշխատավարձի չափն է ամսական՝ ա) 150 հազար դրամ, բ) 220 հազար դրամ:

Լուծում

Դիցուք անվանական աշխատավարձը x դրամ է: Խնդրի պայմանից հետևում է, որ նվազագույն աշխատավարձի դեպքում բավարարվելու հետևյալ պայմանը

$$x - 0.23x \geq 55000, \text{ որտեղից } x \geq 71430;$$

Պատ՝ 71430դ.:

$$\text{ա/ } 150000 \cdot 0.23 = 34500$$

$$/150000 \cdot 0.23 + (220000 - 150000) \cdot 0.28 = 34500 + 19600 = 54100:$$

Պատ՝ ա/ 34500դ., բ/ 54100դ.:

Ծանոթություն. Եկամտային հարկի սանդղակը և նվազագույն աշխատավարձի չափը ենթակա են փոփոխության՝ օրենքով նախատեսված կարգով:

2019 թվականից եկամտային հարկը բոլորի համար դարձավ 23 % (որի մեջ չի մտնում նվազագույն աշխատավարձ): Այսօր այն կազմում է 21%: 2023 թվականից եկամտային հարկը կկազմի 20 %:

Խնդիր 8. (հարկեր) Կարենի հայրիկի այս տարվա եկամուտը հետևյալն է.

ա) մշտական եկամուտ. թոշակ՝ 55 000 դրամ, աշխատավարձն ըստ հաստիքի՝ 150 000 դրամ,

բ) ոչ մշտական եկամուտ. հոնորար՝ 1 200 000 դրամ, նվեր որդուց 250 000 դրամ: Տարվա ընթացքում որքա՞ն եկամտային հարկ է վճարելու Կարենի հայրիկը:

Ցուցում. նկատի ունենալ, որ թոշակից և նվերից եկամտային հարկ չի գանձվում, հոնորարի համար նախատեսվում է 10% եկամտահարկ, իսկ աշխատավարձի համար հարկը գանձվում է ըստ նախորդ խնդրի սանդղակի:

Լուծում

ա/ Թոշակից եկամտային հարկ չի գանձվում: Կարենի հայրիկի աշխատավարձից եկամտային հարկը տարվա կտրվածքով կլինի $12 \cdot 150000 \cdot 0.23 = 414000$ դրամ:

բ/ Նվերից եկամտային հարկ չի գանձվում, իսկ հոնորարից գանձվում է 10 տոկոսի չափով: Այսպիսով՝ Կարենի հայրիկի հոնորարից եկամտային հարկը կկազմի

$$1\,200\,000 \cdot 0.1 = 120\,000 \text{ դրամ:}$$

Տարվա ամբողջ եկամտային հարկը կկազմի՝ $414000 + 120000 = 534000$ դրամ:

Պատ՝ ա/ 414000 դ., բ/ 120 000 դ.,:

Խնդիր 9. (գնումներ) Ֆիրման թողարկում է արտադրանք, որի առաջարկի ֆունկցիան ունի $q = 10,4p - 800$ տեսքը, իսկ պահանջարկի ֆունկցիան՝ $q = 910 - p$ տեսքը (որտեղ q -ն քանակն է, p -ն՝ արտադրանքի միավորի գինը 1000 դրամով):

ա) Քանի՞ միավոր արտադրանք թողարկելու դեպքում կստեղծվի շուկայական հավասարակշռություն, և ի՞նչ գնով:

բ) Ի՞նչ գնի դեպքում շուկայում արտադրանքի դեֆիցիտը կլինի 570 միավոր:

Լուծում

ա/ Տրված պայմաններում շուկայական հավասարակշռություն կստեղծվի, եթե տեղի ունենա $10,4p - 800 = 910 - p$ հավասարությունը, որտեղից ստանում ենք, որ $p = 150$ և $q = 760$: Այսինքն՝ արտադրանքը պետք է լինի 760 միավոր, իսկ միավորի գինը՝ 150 000 դրամ:

բ/ Շուկայում արտադրանքի դեֆիցիտը կլինի 570 միավոր՝ նշանակում է, որ տեղի է ունենալու $910 - p - 10,4p + 800 = 570$ հավասարությունը, որտեղից ստանում ենք՝ $p=100$: Այսինքն՝ միավորի գինը լինելու է 100000 դրամ:

Պատ՝ ա/ 760 միավոր, գինը՝ 150000 դ., բ/ 100 000 դ.:

Խնդիր 10. (գնաճ) Ընտանիքում ներկայումս սննդի, հագուստի և այլ կենցաղային նպատակների համար կատարվող ընթացիկ ծախսերը կազմում են միջինում ամսական 160 000 դրամ Կանխատեսվում է, որ հաջորդող տարիներին գնաճը տարեկան կլինի 4.5%: Գնաճի հետևանքով միջինում որքա՞ն կդառնա ընտանիքի ամսական սպառումը՝ ա) 1 տարի հետո, բ) 2 տարի հետո, գ) 4 տարի հետո:

Խնդիր 11. (ավանդ) Բանկը ընդունում է երկարաժամկետ ավանդ, որի փաստացի համար կազմում է 12%: Քանի՞ տարի հետո քանկում ներդրված գումարը կկրկնապատկվի:

Լուծում

Դիցուք՝ ավանդի չափը k է: n տարի անց գումարը կրկնապատկվել է: Նշանակում է՝

$$k \left(1 + \frac{12}{100}\right)^n = 2k, \quad 1.12^n = 2, \quad n = \frac{\log 2}{\log 1.12} \approx 6$$

Պատ.՝ 6:

Ծանոթություն: Հաշվի առնելով ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը և վարկի փաստացի տոկոսադրույքը սովորողը կարողանա համեմատել և կատարել արդյունավետ ընտրություն: Բարդ տոկոսներ հաշվելու միջոցով կարողանա գնահատել խնայողությունից ստացվող հավելյալ եկամուտը՝ (եկամտահարկի պահում) հաշվի առնելով ներդրման ժամկետը:

Խնդիր 12. (ավանդ) Արթուրն ուզում է գնել ավտոմեքենա, որի գինը 3 միլիոն դրամ է: Այդ նպատակի համար նա յուրաքանչյուր ամսվա աշխատավարձից խնայում է 25 հազար դրամ: Ընդունելով, որ գնած տեղի չի ունենա, քանի՞ տարի հետո նա կկարողանա գնել այդ ավտոմեքենան, եթե՝

ա) խնայողությունը պահի իրենց տանը,

բ) յուրաքանչյուր տարվա խնայողությունը որպես ավանդ ներդնի բանկում, որում տարեկան տոկոսադրույքը առնվազն 10% է:

Խնդիր 13. (ավանդ, գնած) Բանկը դրամով ավանդն ընդունում է տարեկան 12 տոկոսադրույքով, իսկ դուլարով ավանդը՝ տարեկան 7% տոկոսադրույքով: Հայտնի եղավ, որ «դրամային» գնաճը տվյալ տարում կազմել է 6%, իսկ «դուլարային» գնաճը՝ 2%: Յուրաքանչյուրի համար հաշվել փաստացի եկամուտը և պարզել, թե ո՞ր ավանդն է ավելի եկամտաբեր:

Լուծում


Դրամով ներդրված ավանդի չափն ընդունենք 100 միավոր: Մեկ տարի հետո ավանդի գումարը դառնում է $100 \cdot 1.12 = 112$ միավոր, որի փաստացի արժեքը գնաճի արդյունքում հավասար է $112 \cdot 0.94 = 105.28$ միավոր, այսինքն՝ փաստացի եկամուտը կազմում է 5.28% :

Համանման ձևով՝ դուլարով ներդրված ավանդի չափն ընդունենք 100 միավոր: Մեկ տարի հետո ավանդի գումարը դառնում է $100 \cdot 1.07 = 107$ միավոր, որի փաստացի արժեքը գնաճի արդյունքում հավասար է $107 \cdot 0.98 = 104.86$ միավոր, այսինքն՝ փաստացի եկամուտը կազմում է 4.86% : Հետևաբար՝ ավելի եկամտաբեր է դրամով ավանդը:

Պատ.՝ դրամով ավանդը:

3. Ընտանեկան բյուջե, եկամուտներ և ծախսեր

Սովորողը կարողանա կազմել և հաշվել ընտանեկան բյուջեն



Ծախսեր	Գումար	Տոկոսներ
Անուսն	90.000 դրամ	49 %
Կուսուսու ծախսեր	40.000 դրամ	19 %
Հագուստ	30.000 դրամ	9 %
Տնտեսական ծախսեր	8000 դրամ	7 %
Տրանսպորտ	12.000 դրամ	8 %
Խնայողություն	12.000 դրամ	8 %

Խնայողություն 4: Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերն ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակում ներկայացված տվյալներից՝ գտնել թե որքան գումար են հատկացնում Արամի ընտանիքում սննդի, կուսուսու ծախսերի, հագուստի, տնտեսական ծախսերի, տրանսպորտի վրա և որքան խնայողություն են կատարում:

Խնայողության հակադարձը՝ Աղյուսակում ներկայացված է Արամի ընտանիքի ծախսերը ամսվա կտրվածքով: Օգտվելով աղյուսակից ներկայացված ծախսերն արտահայտել տոկոսներով և կազմել համապատասխան շրջանաձև դիագրամը:

Եզրակացություն

Արդի ժամանակաշրջանում յուրաքանչյուր անձ առօրյայում և կենսագործունեության տարբեր ոլորտներում շարունակ առնչվում է անձնական ֆինանսների կառավարմանը վերաբերող խնդիրների: Դրանք արդյունավետ լուծելու համար պահանջվում է ունենալ ֆինանսական գրագիտության բավարար մակարդակ, ինչը կարող է ձեռք բերվել միայն նպատակային կրթական ծրագրերի շնորհիվ: Ֆինանսական կրթության այդ ծրագրերը վերաբերում են հանրության բոլոր անդամներին և աստիճանական զարգացում են ունենում, որպես շարունակական գործընթաց: Այդ գործընթացի առանցքային և հիմնական օղակներից մեկը հանրակրթական դպրոցն է: Հանրակրթական ծրագրերի բովանդակության մեջ ֆինանսներին վերաբերող գիտելիքների ներառումը իր հերթին խթան է հանդիսանում նաև մեծահասակների (ուսուցիչներ, ծնողներ և այլն) ֆինանսական գրագիտության բարելավման համար:

Ինտեգրման մոտեցումը թույլ է տալիս չավելացնելով դասաժամային ծանրաբեռնվածությունը լուսաբանել ֆինանսների կարևորությունը: Կրթության բովանդակության մեջ ֆինանսական գիտելիքների ու հմտությունների հետ մեկտեղ, ներառվում են նաև արժեքներ, որոնք դրսևորվում են վերաբերմունքի և վարքագծի միջոցով: Կարող են ներկայացվել այնպիսի արժեքներ, ինչպես օրինակ՝

- Փողի և անձնական ֆինանսների կառավարման վերաբերյալ դրական վերաբերմունքը, սովորույթն ու մշակույթը,
- Սեփական իրավունքների պաշտպանությունը, որպես սպառողի,
- Կարիքների, պահանջների և հնարավորությունների ներդաշնակեցումը,
- Չեղծարարությունից ու խարդախությունից խուսափումը:

Այդ նպատակով արդյունավետ ուսուցում կազմակերպելու հիմնական խնդիրներից է՝

- Բոլոր աշակերտների ակտիվ մասնակցությունը,
- Սովորողը վստահ լինի, որ կարող է յուրացնել այն ինչ սովորեցնում են իրեն:

Արդյունավետ ուսումնառության կարևոր պայմաններից է՝ դասի ճիշտ պլանավորումը, ճիշտ գնահատումը, ինչպես նաև հետադարձ կապի ապահովումը: Յուրաքանչյուր

դասի արդյունավետության կարևոր տարրերն են՝ անդրադարձը, վերլուծությունն ու ամփոփումը:

Անձնական ֆինանսների կառավարման մշակույթ ձևավորելու գործում կարևոր նշանակություն ունեն ֆինանսական կազմակերպություններ այցելությունները, էքսկուրսիաները, ստուգատեսների անցկացումը և այլ միջոցառումների կազմակերպումը:

Ֆինանսական կրթության իրականացման ընթացում ցանկալի է կիրառել ուսուցման աշակերտակենտրոն մոտեցում՝ համադրելով ակտիվ ուսուցման մեթոդները (գործնական աշխատանք, խմբային աշխատանքներ և հետազոտական աշխատանք) պահելով ուսուցման կապը իրական կյանքի հետ:

<< Ֆինանսական կրթությունը դպրոցում >> ծրագրի հիմքում դրված են 10 սկզբունքներ՝

1. **Ֆինանսական առողջություն** (որպես կյանքի հմտություն),
2. **Փողը պաշտանմունք չէ** (որպես գործիքի ընկալում),
3. **Պատասխանատու որոշումներ** (չկան բացարձակ ճշմարտություններ),
4. **Ակտիվ ուսուցում** (ուսուցման կապը իրական կյանքի հետ),
5. **Ազդեցության մասշտաբի էֆեկտ** (ուսուցչից՝ սովորողին, սովորողից՝ ընտանիքին),
6. **Զուգահեռ ինտեգրում** (ֆինանսական կրթությունը ինքնին առարկա չէ),
7. **Համակարգային մոտեցում** (<<Ես և շրջակա աշխարհը>>, <<Մաթեմատիկա>>, <<Հանրահաշիվ>>, <<Հասարակագիտություն>>),
8. **Նվազագույն կոմպետենցիաներ** (ֆինանսները դինամիկայի մեջ),
9. **Շարունակականություն** (տարրական, միջին և ավագ դպրոցներ),
10. **Աստիճանական աճ** (պարզից բարդին անցում):

Այսպիսով ուժեղացնելով միջառարկայական կապերը, պետք է ստեղծել բարենպաստ պայմաններ այնպիսի աշխատանքների համար, որոնք կծառայեն սովորողների դաստիարակության և սոցիալական հմտությունների զարգացման նպատակին:

Օգտագործված գրականության ցանկ

- <https://lib.armedu.am/>
- www.google.com
- <https://finance.aspu.am/>
- <https://www.cba.am/am/SitePages/Default.aspx>
- Ա.Հակոբյան, Ա. Փոքրիկյան, Շ. Ղազարյան, Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ, Երևան 2019: